եկեղեցին, ուղղել ու դարմանել անկարգ ու թերի բաները, — նոր, բարեկարգ, երկիւղած և իմաստուն սերունդ մը հասցնել օրինակելի եկեղեցականներու, որոնք՝ իր և Ս. Մեսրոբի կենդանութեան ատեն՝ աջակցեցան իրենց ըստ ամենայնի, և անոնց մահէն վերջ այնքան արիաբար և իմաստնօրէն վարեցին հայ եկեղեցւոյ և ազգին ղեկը։

Ս. Սահակի Կանոններուն վերջը կայ Ցիշատակարան Գրչի կոչուած ծանօթութիւն մը[1], որ Ս. Լուսաւորչի կ'ընծայէ սոյն կանոնները, և Ս. Սահակէն պարզապէս թարգմանուած՝ յունարէնէ հայերէն։ Սակայն անկարելի է բոպէ մ'իսկ տատամսիլ և ընդունիլ այդպիսի ենթադրութիւն մը, քանի որ յայտնապէս կ'երեւի թէ անոնց հեղինակը ուրիշ ո՛չ ոք կրնայ ըլլալ՝ բայց միայն Ս. Սահակ, որ յաճախ կը յիշէ ու կը կրկնէ՝ թէ անձամբ տեսած, լսած ու քննած է այն բոլոր անկարգութիւնները և զանցառութիւնները, զորս այնքան հեղինակօրէն կը կշտամբէ, կը դատապարտէ և կը պատուհասէ։ Ապա թէ ո՛չ՝ ի՞նչպէս կարելի է բացատրել, երբ կ'ըսէ «որպէս ամբաստանուրիւն եղեւ առ մեզ ի բազում տեղիս ժողովրդականաց զքահանայից[2]», — դարձեալ, «զոր յուսաք ի նոցանէ՝ գիտացաք և ազացաք[3]», — նոյնպէս կ'ըսէ նոյն էջին մէջ, «յամենայն ժամ պատուէր լեալ էր ի մեզ առ ձեզ[4]», — դարձեալ, «և լսեմք թէ զեկեղեցւոյ ըստ պասս... յանօթ տան զինուորաց[5]», եւն։ Այս և ուրիշ նման ակնարկութիւններ ու բացատրութիւններ բաւականէն աւելի ցոյց կու տան, թէ բացարձակապէս Ս. Սահակ է սոյն կանոններուն հեղինակը, որ յատկապէս իր ժամանակի պահանջին և պէտքերուն համեմատ յօրիներ ու կրցեր է ամէն մէկ բարոյական ցաւերուն յարմար սպեղանիներ դնել և ամուր ամբարտակ մը կանգնել այն հոսանքին դէմ, որ ամէն սրբութիւն ու արդարութիւն խանգարած ու վերիվայր շրջած էր։ Այդ անկարգ ու անսանձ հոգին՝ այն դարուն տիրապետող տարրն էր, ոչ միայն հայկական՝ այլ և յոյն և մանաւանդ ասորի եկեղեցիներուն մէջ, ուր թերեւս յոռեգոյն էր կացութիւնը, ճարակած ըլլալով կղերականներուն մէջ ագահութիւնը, արծաթասիրութիւնը և սիմոնականութիւնը, ինչպէս կ'աւանդեն ասորի գրիչները։ Ճիշդ այդ ժամանակին է (410ին), որ պարսիկ իշխանութեան ներքեւ գտնուող ասորի եկեղեցին կարեւոր ժողով մը գումարեց Սելեւկիոյ մէջ, հռչակաւոր Մարութա եպիսկոպոսին և տեղւոյն Իսահակ կաթողիկոսին նախագահութեան ներքեւ, — և ինչ որ աւելի զարմանալի է, Յազկերտ Ա. (399–420) պարսիկ թագաւորին հովանաւորութեան տակ։ Այդ ժողովին կանոնները և վճիռները հասած են մեզի, որոնց գլխաւոր նպատակն եղած է բարեկարգել և ամրացնել պարսիկ–ասորի եկեղեցւոյն նուիրապետութիւնը, և սանձել կղերականներուն մէջ սպրդած զեղծումները և անկարգութիւնները։ Այդ ժողովէն երկու տարի վերջը (412–413ին), Եդեսիոյ մէջ ալ Բարուլաս եպիսկոպոսը — մեր Ս. Սահակի և Ս. Մեսրոբի ծանօթ բարեկամը — զանազան կարգեր ու կանոններ դրած է, իր թեմին եկեղեցականներուն ու վանականներուն մէջ վարակած ախտերը դարմանելու համար։ Սակայն այդ կանոնները ո՛ և է առնչութիւն չունին մեր Ս. Սահակի կանոններուն հետ, մանաւանդ որ սա անոնցմէ առաջ գրած ու հրատարակած էր իրենները, հաւանօրէն Վռամշապուհ թագաւորին առաջին տարիները (իբր 400–405ին)։ Յաջորդ յօդուածով մը պիտի ջանամ լուսաբանել այս կէտը, համառօտիւ համեմատութիւն մ'ընելով նոյն շրջանի հայ և պարսիկ–ասորի եկեղեցիներուն մէջ, որոնք գրեթէ նման պայմաններու մէջ կը գտնուէին՝ քաղաքական տարբեր պարագաներու տակ։

Հ. Յ. Թ.

1. Սոփերք Բ. Կանոնք Ս. Սահակայ. էջ 115։
2. Անդ. Ա. էջ 88։
3. Անդ. Ա. էջ 89։
4. Անդ։
5. Անդ. Թ. էջ 93։